



ՕՐԱԳԻՐ ԶՄԻՒՌՆԻԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏԱՐԻ

ԶՄԻՒՌՆԻԱ ՈՒՐԲԱԹ 16 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1859

ԹԻՒ 608

ԶՄԻՒՌՆԻԱ 16 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Իտալիոյ դործերը թէպէտեւ միեւնոյն վիճակի մէջ կը գտնուին, այսինքն եւրոպական մեծ տէրութիւնները տակաւին որոշում մը ըրած չեն յիշեալ թերակղզոյն հաստատուն կացութիւնը վնասելու, ի վերայ այս ամենայնի միաւորութիւնը որ ըստ օրէ յստաջ կերթայ և այսօրուան օրս թուականայի, Վատենայի և Լարմայի դքսութիւնները, նմանապէս չկասկած ըստած պապական նահանգները Վերթոմ-Վանտուէլ թագաւորին ձեռքը են և անոր անուամբը կը գաւազարտուին, և կը զօրանան զինուորական պատրաստութիւններով, և որովհետեւ օտար տէրութիւն մը պիտի չկրնայ զինուոր զօրութիւն միջամտել ըլլալ և արգելադրել իտալացիները ինքնայո՞ժար կամօք ըրածը, ուստի կարծեմք թէ այս միաւորութիւնը կրնայ հաստատուն մնալ, առանց ուշադրութիւն ըլլալ իտալական տէրութեանց հաւատարմականութեանը, մանաւանդ որ կերէի թէ մեծ տէրութիւնները՝ (բաց ի Լատինայէն) ուշացնելով իրենց որոշումները ի մասին իտալիոյ, ժամանակ կուգն տալ կենդանական իտալիոյ ժողովրդացը, որպէսզի իրենց ազգայնական գիտաւորութիւնը յստաջ տանին և նպատակին ի դործ դնեն:

Իրաց այս ծանր վիճակը մեծ խռովութիւն պատճառած է պապականութեան կուսակցից սակաւթիւ ժողովրդեան և եկեղեցականաց, թէ ի Հռոմ և թէ ի Վատենայ, ըստորում քացայայտ կերպիւ կը տեսնուի որ, եթէ պապին աշխարհական իշխանութիւնը բոլորովին չկորսուէր, ալ ըլլայ, մեծ հարուած մը պիտի ընդունէր մօտեւոր և շատ պիտի տկարանայ: Եւ ահա այս պատճառաւ շատ գաղղիացի եպիսկոպոսներ հռիւսական նամակներ հրատարակեցին, որով կը պաշտպանեն Հռոմի սուրբ աթոռոյն աշխարհա-

կան իշխանութեան իրաւունքը: Այս եպիսկոպոսաց հետ միաւորեալ են Իւնիէր, Կալէր և Լիոն և Ժոն-Կալ և Գրիգոր օրագրութիւնները և կը հրաւիրեն ամեն երկրի հռոմէացեալն ժողովուրդները որ ջերմեանդ արտիւ ազօթք ընեն առ Լատուած և երկնային օրնութիւնը հայցեն վասն աշխարհական վեհապետութեան քահանայապետին Հռոմի, որ իր ստ լիտանգաւոր վեհապետ մէջ կը գտնուի: Վասնզի այսօրուան օրս հաստատուն կերպիւ յայտնի է թէ Կրամանի դուքսը, որ Վաղղիոյ դեպոսն է ի Հռոմ, պատուէր ընդունած է Վաղղիոն Արքիեպիսկոպոսին իմացընելու որբաղան Պապին, թէ հարկ է Վատենայի նահանգաց քաղաքական կառավարութիւնը, որ մինչև ցայժմ եկեղեցականաց ձեռքն էր, և աշխարհականաց յանձնուիլ: Պապականութեան կուսակցից լրագրութիւնները կը հաստատեն նաև թէ Վաղղիոյ դեպոսն արաջարկէր է Հռոմի քահանայապետին որ ի Էկա-սիոն ըստած նահանգները զատուին պապական միւս երկիրներէն և ուրիշ յարաբերութիւն մը չըլլայ յիշեալ նահանգաց և Հռոմի աթոռոյն մէջ բայց միայն վեհապետութեան (սի. դէրէնը թէ) պարզ կապ մը, յար և նման վեհապետութեան կապին, որով Վատենայի իշխանութիւնները կապուած են օսմանեան օգոստա-փառ Վաղղիոն հետ:

Տարակոյտ չլայ թէ այս առաջարկութիւնները որ Պապին աշխարհական իշխանութիւնը ձեռքէն առնելու կամ սակաւ առ սակաւ տկարացնելու ապացոյցներ են, հաճելի եղած չէ քահանայապետական աթոռոյն, որուն համար կըսուի թէ Վաղղիի կառավարութեանը հետ դաշնակցութիւն ըրած է, որով այս տէրութիւնը զինուորով թեամբ պիտի օգնէ պապին: որ ի Էկա-սիոն ըստած նահանգները զարծեալ իւր հնազանդութեանը ներքեւ առնու ընտելութեամբ: Վա-

րալի թագաւորը արդէն 15 հազար հոգիէ բաղկացեալ զօրաբաժին մը Հռոմի սահմանա-գլուխը յուղարկած է: Ի Էկա-սիոններուն բնակիչներն ալ ամեն հարկաւոր պատրաստութիւնները ի դործ դրած են թշնամոյն յարձակմանցը դէմ դնելու համար: Այս ըսածներէնս կրտսնուի թէ արիւնահեղ կռիւ մը պիտի չունայ դարձեալ երևան ելնելու իտալիոյ մէջ: Իայց հասարակօրէն կը կարծուի թէ բռնութե- ժամանակը անցած է, և աղաւտութիւնը յաղ- թական պիտի հանդիսանայ այս մարտման մէջ որ գուցէ վերջինը ըլլայ Վատենայաց համար: Եւ ինչպէս յայտնի կերպիւ լիմացոյ իւր ըն- թացքը և իւր սկզբունքը ի մասին իտալական դործոյ: Այս մեծ տէրութիւնը կը պահանջէ որ իտալիոյ ժողովրդաց ազատ կամացը վնաս չընուի իւր չըլլայ, այլ թոյլ տրուի անոնց որ իրենց դործքը ձեռքովին և ինչպէս որ կուգն կատարեն: Թէպէտեւ Վաղղիոն ի սկզբան կա- տարեւապէս համաձայն չէր երևել Վաղղիոյ կա- ռավարութեանը հետ և այս պատճառաւ կը վախճուէր թէ չըլլայ որ բարեկամական յարա- բերութիւնները վնաս մը կրեն այս երկու մեծ տէրութեանց մէջ, սակայն բարեբաղդութեամբ այս վախը անհիմն էր, և համաձայնութիւնը չուշացաւ հաստատուիլ մէջերէն: Վասնզի եւրոպական խաղաղութիւնը անհրաժեշտ կեր- պիւ կարօտ է անդղեական և գաղղիական դաշ- նակցութեանը, և այս դաշնակցութիւնը չկրնար աւելուիլ ի պատճառ իտալական ազատութեան, որուն եթէ Վաղղիոն այսօրուան օրս պաշտպան կը հանդիսանայ, Վաղղիոն նոյն աղաւտութեան համար մեծամեծ զոհեր ըրաւ, ուստի կարելի չէ որ անխնամ թողու զայն և իւր սկսած դոր- ծոյն կատարեալ վախճան չտայ ի միջնարումի ի յուրախութիւն սրտի բոլոր իտալացոյց:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏԱՐԻ

Ինչպէս որ պետական պիւնդայ:

Այս Լատուած մը, որ կ'օրհնեն ձորերու խոտերը, և լեւին մայրերը, միջատը անոր գոլու- թիւններ կը շնչեն, փիղը արևուն ծագած ժամա- նակը կողմնէն զանի, թռչունը տերեւներուն մէջ զնա կը քարտէքանէ, կայծակը անոր զօրութիւնը կը յայտնէ և Ովիանտոն անոր անբաւարարութիւնը կը ցուցանէ, բայց մարդը միայն ըսաւ: Չկայ Լատուած:

Ուրեմն այն մարդը իւր թշուառութեանցը մէջ աչքերը դէպ ի երկինք վերուցած, կամ իւր երջանկութեանը մէջ իւր նայուածքը դէպ ի երկիր դարձուցած չէ երբեք, միթէ բնու- թիւնը իրմէ արեւոյ հետ մէկ է, որ չկրնար տես- նել, կամ արդեօք զանի ըստ զի պայմ եղեալ կը կարծէ: Բայց ո՞ր զի պայմ կը լիցաւ երբեք ան- կարգ և հակառակ նիւթ մը այսչափ կատարեալ կարգաւորութեամբ միաւորել:

Արնայ ըսուիլ թէ մարդս Լատուածոյ յայտնեալ մտածութիւնն է. և տիեզերքն՝ անոր զգալի ե- ղած երևակայութիւնը: Անոր որ բնութեան գեղեցիկութիւնը գերազանց խմցականութեան մը ապացոյց համարեցին, պէտք է ինչ զարմանօր զիտել բան մը որ անսահմանաբար կընդ ործակէ որոշելի աչք չընտը, այսինքն շարժումը, և հան- գիտը, ստուերը և լոյսը, եղանակները, աստե- ղաց բնութեանը, որոնցմով երկրի տեսքը անգա- ղ ար կը փախուի, և անոնք թէպէտ ըստ երևու-

թին միմեանց յաջորդական կերևան, բայց էպէս հաստատուն են: Այն տեսարանը որ մեզի համար կը ծածկուի, ուրիշ ժողովրդաց կը նորոգուի, ոչ թէ տեսարանն է փոխօրը, այլ տեսարանին տէրը:

Այսպէս Լատուած իւր գործոյն մէջ իմա- տութեամբ միացոյց երկու ներհականները այս- ինքն հաստատ և յառաջախաղաց տեղութիւն- ները, որուն առաջինը ժամանակին մէջն է, երկ- րորդը ամեն տեղ, առջինով տիեզերաց վայել- չութիւնները մի, անվերջ, և անփոփոխ են, իսկ երկրորդով այն վայելչութիւնները բազմապա- տիկ են, սահմանաւոր և նորոգեալք, առանց մէկին՝ մեծութիւն չէր գտնուէր արարչագոր- ծութեան մէջ, առանց միւսին՝ ձանձրալի միա- կերպութիւն եղած կը լիար միշտ:

Հոս ժամանակը կերէի մեզի նոր կերպարանի մը տակ, իւր ամենափոքր մասն ալ մէկ ամբող- չութիւն կը կազմէ, որ ամեն բան իւր մէջը կը պա- րունակէ և ամեն բան իւր մէջ կը փոխուի: միջա- տի մը մահուանէն մինչև արեւմտի մը ծնունդը, ժամանակին իւրաքանչիւր վայրկեանը ըստ ինք- եան պզտի յաւիտեականութիւն մըն է: Աստի մէկ վայրկեանի մէջ մարդը բէր միացուր բնու- թեան ամենագեղեցիկ գէպքերը, և նմարէ թէ՛ օրուան ժամերը և բոլոր եղանակները ի միտին կը տեսնեն, գարնանային առաւօտ մը, և աշնանային առաւօտ մը, աստեղադարձը զի- շեր մը, և ամպամած գիշեր մը, ծաղկազարդ մարգագետիններ, և եղմամբ վնասուած մերկ անտառներ, ոռիւ հոսնած արտեր, անտուն ճիւղ-

գաղափար մը կուենանա տեղերաց տեսարանին վրայ: Ո՞րքեւ հիացած կընայիս դու այս ա- ընին վերայ՝ որ արեւմուտքին կամարներուն տակ կընկղմի, ուրիշ գիտող մը անոր արշաւուսոյ կողմէն ծագելը կը տեսնէ: Ի՞նչ անիմանալի զօ- րութեամբ ան հինօրեայ աստղը, որ երեկոյեան փոշին մէջ յոգնած և տօթակեղ կը ինքնէ, դարձեալ միեւնոյն վայրկեանի մէջ նոյն իսկ այն առոյգ աստղն է որ արշաւուսոյ սպիտակափայլ քօղերուն մէջնէն յողալից կը զարթնու:

(Յոռան ամեն վայրկեան արեւոյ կը ծագի, իւր գեղեցիկ վերայ կը փայլի, և ի մուտս կը լու- նարհի, կամ աւելի շիտակ գրուցելով մեր զգայա- րանքները զմեզ կը խաբեն, և չկայ ոչ ճշմարիտ արեւ ելք, ոչ ճշմարիտ արեւմուտք, և ոչ ճշմա- ըրիտ հարաւ: Իրարն ալ միայն որոշ կէտի մը վերայ հաստատուած է, ուսկից արեւակը երեք լայս մէկտեղ կը ծառագայթէ, երեքն ալ միեւնոյն էօրութեամբ: Այս երեքակ պայծառութիւնը գրեթէ բնութեան ամենագեղեցիկ բանն է, քանզի անիկա մեզի մշտնջենաւոր շքեղութեան և Լատուած ամենագոր կարողութեան գաղափարը լիար միմեանս կը յայտնէ աստուածային փառաւոր երբորդութե պայծառ պատկեր մը:

Արնայ մարդկային միտքը լաւ իմանալ թէ բը- նութեան տեսարանը ի՞նչ կը լիար՝ թէ որ անիկա միայն նիւթին շարժման ձեռքը թողուած ըլլար: Իմպերը ծանրութեան օրինաց հնազանդելով ուղղակի երկրի վերայ կիշային կամ օդին մէջ քրդած և վեր կեցելին, բոպէ մը ետքը շատ թանձր կամ շատ անօր կը լիար միմեանս:

Թագաւորը՝ իր'նց Թագաւորն է, Բայց մինչև որ ընտրեալ Թագաւորը իւր ձեռքը առնու թող կանայի տէրութեան սահմը, և թէ այժմեան կառավարութիւնը պիտի կառավարէ զայն վասն Վորին Վեհափառութեան, պէտք է որ անոր օգոստափայլ անուամբը յարգուի և զօրանայ: Վաս կերպիւ իտալական օրինոյ նոր հիմնադրու թիւնը ապահովութեամբ սկսուած պիտի ըլլայ, և ամեն արգելքները հետզհետէ պիտի անհետ ըլլան, և Վերսալի իւր հանգարտութիւնը և իւր ճշմարիտ հաւատարմաւորութիւնը պիտի դառնէ իտալացի ոչ միայն անութեամբ և հաստատաւորութեամբ:

Թոսկանացիք, ձեր կառավարութիւնը կը յայտնէ թէ յետ այսորիկ իւր իշխանութիւնը ՚ի գործ պիտի դնէ յանուն վեհափառ Վերսալի միմանեւ Թագաւորին զոր ընտրեցիք: Տուեալ ՚ի Ֆրանցու, 29 սեպտեմբերի 1859:

Վերսալի նախնիք Թագոյն մէջ ծանուցինք թէ իրենանու վսեմափայլ նահանգապետը ուստեան լեզուաւ ճառ մը խօսեց է հայկերութիւն ժամանակը՝ զոր հայազգի իրենանցիք ըրեր են ՚ի պատիւ վեհափառ կաթողիկոսին:

Վհաւանի այս ճառին Թարգմանութիւնը, զոր ըրեր է գերապատիւ Վարդէի Վարդապետը, և մեր սրբազնատուրք քահանայապետին պատասխանը:

Վիեննայի Թիւն առհասարակ ամենայն հարց սրբոյ որք աստ գտանին, և որք ընդ քահանայապետին իւրենանց առեալ բերին յաջորդէս յայս ոչ միայն զօրհանութիւն անոր, այլև զայս մարդկեզէն իմաստութեան: Վ՛րք հարց սուրբք, աստուոր դուք էք, որ առաջն առնէք մեզ զհոգեկան ջանասիրութիւն բարոյական մասին դարուս մերոյ: Վ՛րք թե տաներորդ դարու, կրօն և փիլիսոփայութի մաքառէին ընդ միմեանս և այնպէս իմե կարծէին ժողովուրդք, և թէ զբաւեցնէին չկարեն բնաւ կալ ՚ի միտսին, իսկ յինչ և տաներորդք զամբողջ մեր ձեռնան յարին առ միմեանս: Վ՛րք նմանեալք ձեզ, Վրտու առաջնութեամբ և գիտութեամբ զարդարեալք չրուամ արասցեն շողկապի միտւորութի նոցին: Վս իբրև այր ՚ի Ռուս ազգէ, պարծանս անձին համարիմ գոյս ինչ, զի ՚ի ծոյրի աստ սահմանաց լուսաւորեալ աշխարհի, յերկրի աստ զոր մարթէ անուանել արդարեւ երկիր Ստուածաշունչ գործն պատմութեան տեղը, ՚ի մէջ շինուածոց և յիշատակարանաց՝ որք փարեի են և սիրելի սրտից ոչ միայն հայկազանց, այլև ամենայն առն մտաւորի: զի աստանոր ասեմ մեր ՚ի գին արեան մերոյ փրկանաւորեցաք և պահպանեցաք զնու իրական օթեանն Ստուածապաշտութեան և զմաստութեան, յորմէ ընթացին սրբա մինչև ՚ի խորս Վրեւից, և ամենայն ուրեք յայտնի տրացեն զօրհանութեան իւրենանց զօր միաբանութեան տարածանելով ընդ ամենայն բարութիւն երկրաւորս և զօրիս յերկինս վերամբառնալով:

Վ՛րք իմս ՚ի ձեռն խնդիր ուլ չարք սուրբք, ՚ի փոխարէն իմոյս սիրոյ առ ձեզ և ՚ի սէր հաճուէ ձերոյ ընդ իմս վերատեսչութիւն ազգագոյցն ձերոյ, յանձն եղելոյ ՚ի փոյթս խնամոյ իմոյ, այս են, զի մի մոռանայցէք զիս յաղթմս ձեր:

Վ՛րք արարեք՝ զի ՚ի տաժանական ապարիզի աստ մարտութեան, կողմերեցուցէ յիս Վարձեալն զիմաստ մտաց, զարգարարութեան և զերկայնամոտութեան, և արացէ զիս այր կարող և արժանի կատարելոյ զգիտութեան իւրենանց և զկարգադրութիւնս պետութեան Վրտուաց զիցեալ իմաստութեամբ և արդարասիրութեամբ:

Վրբոր աւարտեց ձեռնէրալը, վեհափայլ հայ բապետն այսպէս պատասխանեց:

Վասցէք վսեմափայլ կառավարչին, թէ իր անտեսարանութիւնը մի առ մի մտիկ ըրի, և զգացի որ Ստուած իր սիրելոյն հոգեւոր կրթութիւնս իւր բոլոր խօսքերն Ստուածահաճոյ են, և Ստուած իր հոգին իբրև պատգամ ընտրեց է մարդկանց խօսելու, ինչպէս կըսէ իմ Վրբոր՝ «Տաց զօրէնս իմ ՚ի միտս նոցա և ՚ի սիրտս նոցա գրեցիք զնոս»:

Վերսալի եմ և շատ ուրախ, անսնելով այսօր որ Ստուածոյ ինձ յանձնած ժողովուրդեան մէկ մասը իր բուն հայրենական երկրին մէջ կրենակի և իրեն նման ազնուահոգի և առաքինի իշխան

մը խնամատարութիւնը կրկնէ, և մանաւանդ երանի կուտամ մեծազոր վեհափառ Վրեւսանդր կայսեր, որ իրեն նման բարեօրիտ և հաւատարիմ պաշտօնեաներ ունի, ուստի ինչպէս սիրելի է ինքնակալ կայսեր և ժողովուրդեանս, նոյնպէս անշուշտ սիրելի է Ստուածոյ, և ես ալ կըմաղթեմ առ Վեհակալը, որ զինքը աւելի մեծամեծ իշխանութեանց և աստիճանաց արժանի ընէ:

Վ՛րք ՚ի ձեռն շնորհակալութեանս վասն առիտ ըսած ընդունելութեանը՝ կառավարիմ իմ սիրելի սեզանակցացս ըմպելայս գաւաթս իր անգին կենացը համար:

Վերելիայի լրագրութիւն մը Վ՛րք ՚ի Վրեւսանդր լրագրութեան, հետեւեալ յօդուածը կը հրատարակէ:

ՄԵՌԱՆԻԼ... ԿԱՐԱՅԻՆ

Վաշնկթընի մէքենայն, որ մէկ բոպէի մէջ 160 կապարեայ գնտակ կը թափէ, միտքերնիս ձգեց բաղդատել զյառաջող իմութիւնը որ եղած է բժշկելու և սպանանելու արհեստին մէջ: Վաս վերջի 20 ամաց մէջ, Վերելիայի Վրեւսեալ Վահանգիւս կառավարութիւնը 500էն աւելի արտօնութեանց հրամանագիրներ տուաւ մահաբեր զինուոց նոր զիւտի կամ կատարելագործութեան համար, այնինչ բժշկական արհեստին վրայօք միայն մէկ գիւտ կը տեսնեմք այս դարուս մէջ, որ է շրջուելոյն գրութիւնը (սխմել): Վրտու ամենայնիւ կրնանք հաստատել թէ այս հոգեկաւոր բժշկին երկու գեղերը, այսինքն գեղահատերը և սպեղանին, առատապէս կը փոխարինեն կործանման և մահուան միջոցներուն պատճառած կորուստը:

Վանդի ապացուցեալ է թէ այս գեղերը աւելի մարդիկ աղատեցին ՚ի մահուանէ քան որ նորագիւտ հրոցանները, թնդանութեանը և այլն չլլացան սպանանելու: Վրտու բաղդատութիւնը շատ իմաստուոր է, ըստորում յիշեալ գեղերէից գործածութիւնը իւրաքանչիւր տարի կաւելնայ աւելն երկրի մէջ: Կարգաւ գրագրութիւնները, երկրագնացին սր կողմէն որ եկած ըլլան, պիտի տեսնեն անոնց մէջ զվիշտութիւնը բժշկութեան մը ՚ի ձեռն գեղերէից շրջուելոյն:

Ստամբուլի և ընդերաց խօթութիւնները, այս ներքին սաստիկ ցաւերը, որոնք յառաջագոյն յուսահատութիւն կը պատճառէին քաջահմուտ բժշկաց, իրենց ստակի զօրութիւնը կորսնցոյցին յորմէ հետէ կը ծանաշեմք շրջուելոյն գեղահատերը: Կրնանք հաստատել թէ ընդ միջական և հանապազօրեան տեսքերը չեն կրնար զիմանալ անոնց փրկաւէտ աղբջուութեան ձեւ:

Վրտու տուած խոցերը և կեղք (իւրեք) ըսուած վերքը՝ որ շատ կը պատահի գործաւորաց զբաղելոց յաշխատութիւն կիզանող արեւու մը ներքեւ, որոնք ոտքերնին կախած են ապականեալ և վատառողջ ջրով լեցուն լճերու և հորերու մէջ, այս վերքը, կրնայ քանի որ արագութեամբ կը բժշկուի գործածութեամբ շրջուելոյն սպեղանելոյն, որ շատ մարդիկ այս տեսակ աղետալի խօթութիւններէ վախնալու պատճառ ունենալով, այնչափ կը վտառահանայ այս գեղերէից օգտակար ներգործութեանը վրայ, որ զանց կընեն հարկաւոր զգուշութիւնները ՚ի գործ գնելու:

Վրբուրի վառօգտակար վսեմափայլ Տատեան Պօղոս-Պէյին որդւոյն մեծաշուք Վարտիկ է ֆէնտիին տաճարութեան հանդէսը, նմանապէս Վրբին Վ սեմութեան մեծ դատեր հարսանեաց հանդէսը անցեալ կիրակի ամսոյս 4ին, մեծ փառաւորութեամբ կատարուեց Վրի Սեֆանօ գեղը: Յայտնի է որ առաջնոյն լծակիցը յարգամեծար Վալալանեան Վալիթ աղային գուստրն է և երկրորդին լծակիցը՝ Պօղոս Վարտիկ գեղական տան առաջին խորհրդոյ քարտուղար հայազգի մեծարդոյ Ներիման խանն է:

Վրտու շքեղափայլ տօնախմբութիւնը մեծ պատիւ կընէ ոչ միայն Տատեան մեծազգի գերդաստանին, այլև բոլոր շայց աղային, ըստորում կոտորանքնուպօղոյ Ռուսաց գեղական վսեմափայլ Ռոպանօֆ իշխանը կը բաժնորէ Վարտիկ է ֆէնտիին և Վարտիկ գեղական վսեմափայլ Վէհմէա շիւսէին խանը Ներիման խանին:

Կնքահայրութեան պաշտօնը կատարեցէ, կրօնական արարողութեանց կատարումը Ռոպանօֆ իշխանին յանձնելով: Վայց յայտնաւ յիշեալ տօնախմբութեանը հրաւիրուած ըլլալով ներկայ գտնուելու են 6 գեղական մեծ տէրութեանց:

Վահանգի Վրեւսեան Վրեւսեան օրագիրը իւր թուոյն մէջ, որ ՚ի 7 ամսոյս, հետեւեալ կերպիւ կը պատմէ այս աղբջային փառաւոր հանդէսը:

«Նոցեալ կիրակի կրկին տօնախմբութեան հանդէս մը կատարեցաւ Վրի-Սեֆանօ գեղը: Վահանգի ՚ի մէջ մեծ դատեր արքունի վսեմափայլ տեւ հատեան Պօղոս-Պէյին և Ներիման խանին որ առաջին խորհրդոյ քարտուղար է Վարտիկ գեղական տան: Երկրորդ տօնախմբութեանը ՚ի մէջ Տատեան Վարտիկ է ֆէնտիին որ Վօղոս-Պէյին որդին է, և Վալիթ Վալալանէին գուստրը:»

«Վրտու արարողութիւնները կատարեցան Պօղոս-Պէյին տան մատուռին մէջ: մէկը կէս գիշերը երկու ժամ անցած և միւսը՝ նոյն օրը կէսօրին երեք ժամ մնացած:

«Վարահանդէսը կէս գիշերին 2 ժամ մնացած սկսաւ և կէս գիշերը 2 ժամ անցած ընդհաւ: ըստորում այն ժամը սկսան հարսանեաց կրօնական արարողութիւնները:

«Վ՛րք հացկերոյթը, որուն ներկայ գտնուեցան 110-120 անձինք, երեկոյեան ժամը 7ին (ըստ Վրտուպոյ ոչ) տեղի ունեցաւ:

«Վրտու կրկին տօնախմբութեան ներկայ գալու նուեցան Վաղդիոյ գեղական վսեմափայլ մօսիւթիւնը, Նոցիոյ գեղական վսեմափայլ սրբ շէնքի Վրեւսէն, Ռուսիոյ գեղական վսեմափայլ Ռոպանօֆ իշխանը, որ կը բաժնորէ Թեան պաշտօնը վարեց այս երկու հարսանեաց մէջ, Վստրիոյ գեղական, Վերելիայի գեղական իւրաքանչիւր գուստրերով, և Վարտիկ գեղական վսեմափայլ Վէհմէա շիւսէին խանը, Վրտու երկու անձինքներէն իւրաքանչիւրը ընկերացեալք իւր գեղական տան պաշտօնատարաց մէկ մասէն և շիւսէնացոց գեղական տան կողմէն իբրև երկու փոխան եկած էր նոյն գեղական տան Թարգման մօսիւթիւնը: Ռոպանօֆ իշխանը շքեղ ընծաներ շնորհեց երկու նորապատիւ հարսերուն հացկերութիւն ժամանակը Վստրիոյ գեղական պարագայի խիստ յարմար տեսնախօսութիւններ ըրաւ գինի խմելու առթիւ: Վրտու տեսնախօսութեանց հետզհետէ պառասխանեցին Վրեւսիոյ և Վաղդիոյ գեղականները, գինի խմելու առաջարկելով: Վրտու մեծաշուք տօնախմբութիւնը երկու օր տեւեց»:

Վտուիոյ երկիրը մօտ օրերս դարձելի ոճիրով մը պղծուեցաւ: Վարմայի գրքութեան զօրաց վաղեմի գնդապետ Վնիթի կոմսը չարաչար կը սպանէ և հրապարակաւ սպանուեցաւ հոյտեմբերի 5ին ըստ նոր տուածի: Վրտու ստակի գէպքին վրայօք հետեւեալ տեղեկութիւնները կը գրեն:

«Նրէկ կէսօրը 6 ժամ անցած սոսկալի գէպք մը պատահեցաւ ՚ի Վարմայի Վնիթի կոմսը, որ վաղեմի գնդապետ էր Վարմայի զօրաց և ատելի յայժմ ժողովուրդեան որ կամբաստանէ զնա թէ մահանակից եղած է հանդույցեալ գեղին ըրած չարացը, երկաթի ճանապարհու կանցիկը Վնիթի շէնքա երթալու: Վարմայի կայսրանը ճանչուեալով, իսկոյն բռնուեցաւ և պահապան զօրաց ձմերանոցը գրուեցաւ: Կէս ժամուան մէջ խառնիճաղանձ ամբօրը իմացաւ այս բանտարկութիւնը և խուռն բաղժութեամբ յարձակեցաւ ձմերանոցին վրայ, որուն գունը կոտորեցին ու յափշտակեցին, գրեւ զուրկ Վնիթի կոմսը և զուրս հանելով չարաչար կը զարնէին ամեն կողմէն: Յետոյ չուանով մը կապեցին ձեռքը և փողոցներուն մէջ կը քաշկրտէին այնինչ տաւալին կենդանի էր:

«Վրճարանի մը առջև հասնելով, ուր ժամաւ նակաւ կը յաճախէր, ներս խմբեցին խեղճ գնդապետը և այնտեղ գլուխը կտրեցին. ու յաղթանակաւ մեծ հրապարակը բերին ու հոն գտնուած կոթողի մը վրայ դրին: Վստմուծ ամբօրին ցնծութեան աղաղակները այս կացութեան սոսկուելու կաւեցնէին: Վրեւսի պահապան զօրքը, նմանապէս կանոնաւոր զօրաբնդերը շուտով կանչուեցան, բայց երբոր հասան, արդէն ամեն բան ընդցած էր: Ներկային հան

